ՅՈՒԼԻՍ 1921, ՅՈՒԼԻՍ 1991

ՎՐԷԺ ԳԱԼՍՏԵԱՆ

Յիրաւի, Յուլիս ամիսը ճակատագրական ամիս է բազմաչարչար Արցախի պատմութեան մէջ: 1921 թուականի Յուլիսի 5ին հայ եւ օտար բոլշեւիկները մի պարզ քուէարկութեամբ որոշեցին հայոց Արցախը թողնել համայնավարական Ադրբեջանի կազմում: 1991 թուականի Յուլիսի 16ին 142 պատգամաւորներ, հա՛յ պատգամաւորներ, Երեւանում նոյնը կատարեցին: Բացառուած չէ, որ պատմաբանները այդ օրը պարզապէս կ'որակեն որպէս պանծալի Արցախեան շարժման վախճանի օր:

...Թւում է իսպառ կորցրել ենք զարմանալու յատկութիւնը, բայց, իրօք, դա մեզ միայն թւում է: Որովհետեւ ինչպէս չզարմանաս, երբ Յուլիսի 15ին ընդունուած ՀՀ ԳԽ որոշման փոխարէն յաջորդ օրը, այսինքն՝ Յուլիսի 16ին, ընդ որում առանց խղճի խայթ զգալու, ապաւինած բոլշեւիկեան աւանդոյթին, «թէ մի շարք պատգամաւորներ առաջարկել են» բանաձեւին, առաջարկում են փաստաթուղթը վերանուանել յայտարարութիւն: Իսկ յայտարարութիւնը անհասցէ է եւ պատասխանատուութիւնից խուսափելու ձեւ է: Եւ ինչպիսի խղճուկ փաստարկ. անցած մէկ տարում ԳԽ եւ ԳԽ նախագահութիւնը միասին ընդունել են 45 յայտարարութիւններ եւ դրանք դիտուել են (իրօք, ինչպէս չզարմանաս) որպէս իրաւական փաստաթղթեր:

Եղան նաեւ ըմբոստացողներ՝ պատգամաւորներ Գեւորգ Մանուկեանը եւ Էդիկ Ղուկասեանը, բայց խորհրդարանը պարզապէս նրանց չպաշտպանեց, եւ քաղաքական լռութիւնը իր դերը կատարեց:

Չի կարող չզարմացնել եւս մի հանգամանք: Եթէ պատգամաւորները Յուլիսի 15ին կարող էին ասել, թէ տեղեակ չէին, որ բանակցութիւնների ուղին տանում է Արցախը Ադրբեջանի կազմում թողնելուն, ապա ամսի 16ին նրանք այդ հնարաւորութիւնը ստացան: Բացելով խաղաքարտերը ԳԽ նախագահը պարզապէս շարադրեց բանակցութիւնների բովանդակութիւնը. ա. վերականգնում է մարզային խորհուրդը, բ. անցկացուում են մարզային, տեղական եւ Ադրբեջանի ԳԽ ընտրութիւններ, գ. վերացուում կամ վերանայուում են Արցախի վերաբերեալ ընդունուած որոշումները (իհարկէ ոչ յայտարարութիւնները): Եւ այս քաղաքական սցենարի համար Յուլիսի 16ին ձայն են տալիս 142 պատգամաւորներ:

Պատահական չեն պատգամաւորներ Սամուէլ Շահմուրադեանի եւ Սուրէն Զոլեանի վերջին ճիգերը՝ փրկելու Հայաստանի ԳԽ քաղաքական դէմքը, որովհետեւ, ինչպէս արտայայտուեց Շահմուրադեանը, այդ փաստաթուղթը գնահատուել է որպէս կապիտուլիացիայի ակտ: Բայց եւ՛ նրա, եւ՛ Զոլեանի առաջարկը՝ փաստաթղթում նշել Հայաստանի պատրաստակամութիւնը պաշտպանելու արցախահայութեան ֆիզիկական գոյութիւնը եւ շահերը, վճռականօրէն մերժեցին նախագահը եւ նրա առաջին տեղակալը: Չէ որ, իրօք, ինչպէ՞ս կարելի է պարտուողական փաստաթղթում ակնարկել պայքարի մասին՝ թշնամին դա չի հասկանայ եւ չի ընդունի, իսկ մտածուած է այնպէս, որ Ադրբեջանը «հաւանի» ՀՀ ԳԽ ընդունած փաստաթուղթը:

Եւ այսպէս, խորհրդարանը կարող է ազատ շունչ քաշել. հոգեմաշ, քաղաքական իրավիճակը չկայունացնող (բայց ոչ Հ.Յ.Դ. պատգամաւորները) Արցախը մընաց անցեալում: Իսկ առջեւում նախագահի ընտրութիւններն են: Ի՞նչը կարող է աւելի հաճելի լինել, քան երբ զբաղուում ես գլխացաւանք չպատճառող հարցով. քննարկել եւ ընդունել օրէնք նախագահի կարգավիճակի մասին, նախագահի ընտրութեան կարգի մա- սին: Սրանք էին, որ մտածուած ընդմիջումներով արտում էին Յուլիսի 16ի նիստի ընթացքում: Հայրենիքը վտանգի մէջ, իսկ մենք մէկ-միւսին գերազանցելով արտասահմանեան փաստաթղթերի տեղեակութեան մէջ, սիրով քննարկում ենք ապահով երկրին բնորոշ խնդիրներից մէկը՝ նախագահի ընտրութեան խնդիրը:

Այսքանն էլ բաւարար չէ. քաղաքական եռանկիւնի կազմելու համար պահանջւում է եւս մի խնդրի լուծում՝ դա դաշնագրի հարցն է: Եւ իրօք, չէր աւարտուել Արցախեան հերոսապատումի աւարտի արձանագրումը, երբ խորհրդարանին անմիջապէս պարտադրուեց դաշնագրի հարցի քննարկումը: Սա էլ է բխում կապիտուլիացիայի տրամաբանութիւնից:

Արցախը Ադրբեջանին վերա-

Շար. էջ 7 →

ՅՈՒԼԻՍ 1921, ՅՈՒԼԻՍ 1991

← Սկիզբը էջ 2

դարձնելուց յետոյ (իսկ ասում էին, թէ իրենք պարզապէս նախընտրում էին պայքարի քաղաքական ուղին) հարկ է, որ կատարուի յաջորդ քայլը՝ դաշնագրի ստորագրութեան նախապատրաստութիւնը: Չէ որ Մոսկուայի պահանջը յստակ է՝ դաշնագրին Հայաստանը կարող է մօտենալ միայն առանց Արցախի: Ասել է թէ Արցախը խանգարում էր ոչ թէ անկախութեանը, այլ միայն դաշնագրին:

Իսկ անկախութիւ՞նը՝ կը հարցնի դեռեւս հաւասարակշռութիւնը չկորցրած մեր ընթերցողը կամ հայրենակիցը: Անկախութիւնն այսօր յայտնուել է Դաշնագրի եւ Նախագահի ընտրութեան հարցերի միջեւ: Ինչպէ՞ս կարող ենք լրջօրէն հաւատալ հանրաքուէի հայրերին ու ջատագովներին, երբ նրանք Օգոստոսի 16ից մինչեւ Սեպտեմբերի 16ը նախատեսում են նախագահի թեկնածուների առաջադրման համար, իսկ Սեպտեմբերի 22ից սիրով ստանձնում են ընտրարշաւի մասնակցի պարտականութիւնները: Հանրաքուէն պարզապէս յայտնւում է քաղաքական աքցանի միջեւ, իսկ հասարակական հոգեբանութիւնը նրան սկսում է ընկալել որպէս հերթական ներկայացում, բայց վատ ներկայացում, որին չեն ցանկանում շատ հանդիսատեսներ ներկայ գտնուել:

Ինչպէս ասում են, հանրաքուէն իր դերը կատարեց (այսինքն՝ թոյլ չտուեց 1991 թուականի Մարտին անցկացնել ՀՀ ԳԽ նստաշրջան, երբ Մոսկուայում գնում էին խորհրդա-թուրքական բանակցութիւններ) եւ նա պէտք է հեռանայ քաղաքական ասպարէզից:

Այդպիսին են քաղաքական խաղի դաժան օրէնքները: Ասպարէզից հեռանում են ոչ միայն մարդիկ, այլեւ գաղափարները:

Մնում են հանրաքուէին ու անկախութեան գործընթացին անկեղծօրէն հաւատացող մեր համաքաղաքացիները: Նրանց սպասում է դառը հիասթափութիւն եւ...լաւ դաս՝ այսուհետեւ, առանց խորանալու բռունցքները վեր չպարզել ամեն խօսքի առթիւ, այլ խորամուխ լինել, թէ ասուածը հերթական գեղեցկախօսութի՞ւն է, թէ՞ հայրենասիրական քայլ: Օրինակները շափազանց շատ են:

Իսկ Արցախը հաւատում է բոլոր նրանց, ում համար քաղաքականութիւնը խաղ չէ, իսկ հայրենասիրութիւնն էլ՝ գեղեցիկ խօսք եւ կեցուածք: Հայրենասիրութիւնը կոնկրետ վարքագիծ է: